


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ
Հիկու թիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2,60 Տոյար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Յ Ե

Rédaction du journal

„Iraounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА

Հրոսթիանք եւս

չեմ տրոսիր

Ծրարացման տողը
20 ւանդիւմ

ՅՈՒԶԻՉ ԼՈՒՐԵՐ
ԿՈՎԿԱՍԵՆ

Շատ հաւատարի աղբիւրէ մեզ հա-
ղորդեալ են հետեւեալ յուզիչ լու-
րերը:

«Ռուսահայ եկեղեցական կա-
ռուածոց գրաւման հրամանին դէմ
Հայրիկ ամեն կերպ ընդդիմած ըլ-
լալով, կառուութիւնը Անոր հետ
անմիջական յարաբերութիւնները
զադրեցուցած է. և միեւնոյն ա-
տեն սկսած է խեղճութեամբ մէջ բըռ-
նութեամբ պահանջել կալուած-
ները:

Ս. Աստուածածնի կալուածները
գրաւել ուզած է կառավարու-
թիւնը, բայց աւագերէցը առաք-
եալ է թէ խեղճութեամբ կալուած ունի
Ս. Առաջնորդէն, որ բացակայ է
թեմէն: Պաշտօնականները պատաս-
խանաւ են «Առաջնորդից կալու-
ած ըլլալը չենք գիտեր, հրա-
մանը Նիքոլա Բինն է» և հրո-
վարտակը ցոյց տալով հնչու-
թեամբ առած են եկեղեցիի 215000
րուպլի պատրաստ դրամը եւ կալ-
ուածները առանց ընդդիմութեան
գրաւած են: Այս դէպքին վրայ
Հայրիկ Ատրպատականի երկու բա-
հանները բերել տալով կարգա-
լոյժ ընելէ վերջ Սեւանայ վանքը
ղրկած է:

Բ. Կառավարական պաշտօնեա-
ներ դիմած են Տաթեւի վանքի
վանահօր. բայց գիւղացւոց եւ ալ
աւելի կանանց ահագին ընդդի-
մադրութեան տեղի տալով հո-
քաշուած են:

Գ. Շուշիի մէջ եւս ժողովուրդը
հետեւած է Տաթեւի գիւղացւոց
ընթացքին:

Դ. Կառավարութիւնը խիստ
միջոցներով ուզած է Գանձակի
կալուածները գրաւել. բայց Բէ-
նիկ վարդապետ նախ տեսնելով
ժողովուրդին թուլութիւնը, խնամք
ունեցած է ցոյց մը կազմակերպել
իր եւ Առաջնորդարանի դէմ, որպէս
զի կառավարութիւնը հեյտու-
թեամբ չմտնեայ: Ժողովուրդէն հա-
րիւրաւորներ խմբովին կերթան
Առաջնորդարանի դուռը և պա-
տահաններու ապակիները կը կոտ-
րեն: Եւ կը պահանջեն ամեն վը-

տանկ յանձն առնել կալուածները
չը յանձնելու համար: Ոստիկա-
նութիւնը երբ վրայ կը հասնի,
քարերու հարուածներու եւ
ծեծի կենթարկուի: Նահանգա-
պետի բացակայութեան պատճա-
ռաւ փոխ-նահանգապետը գին-
ւորներով եւ ոստիկաններով (սթը-
րաժներ) վրայ կը հասնի, ժողո-
վուրդը երբ կրկին կարեւորու-
թիւն չի տար, կը հրամայէ կրակ
ընել: Ղեկնորդները հայեր ըլլալ-
ուն պատճառաւ չեն յանձն առեր
եւ նորիպէս ասոնցմէ ոմանք իրենց
հրացանները ժողովուրդին կուտան:
Փոխ-նահանգապետը կը հրամայէ
ոստիկաններուն. բայց երբ ասոնք
կը դժկամակին, ինքը իր վեց-
հարուածեանով ժողովուրդէն մէկ
երկու մարդ կսպաննէ, որով ոս-
տիկանները սիրտ կառնեն եւ առ-
սերամերկ կը յարձակին ժողով-
դին վրայ ու կը հարուածեն ան-
խնայ: Այս պարագային կը մեռ-
նին 10 հայ, մին օրիորդ, եւ
40—50 կը վիրաւորուին, իսկ կա-
ռավարութեան կողմէ մէկ պիւ-
ւոր եւ մէկ ոստիկան կը վիրա-
ւորուին: Ժողովուրդը կը ցրուի.
իսկ Բենիկ վրդ. կը բողբոքէ. եւ
ընդհ. դատախազը կարճանագրէ
եւ փոխ-նահանգապետը յանցաւոր
եւ պատասխանատու կը գտնէ:
Փոխ-նահանգապետը փախած է և
ամբողջ Գանձակ սուգի մէջ է:

ԾԻԾԱՂԵԼԻ ԿԱՏԱԿԸ

Ամեն անգամ որ գրիչս ձեռք կառ-
նեմ ազգային կեանքէն մի քանի տո-
ղիւր շարադրել. միշտ երեւակայու-
թեանս առջեւ կը պատկերանայ շարք
այն ծիծաղելի արարքներուն, որոնց
պաշտօնական հանգամանք տալու
փութկոտութեան մէջ երբեք չեն թե-
րաբարձ՝ ո՛չ Թաղ. Խորհուրդը եւ ոչ իսկ
քահանայից դասը:

Հոս, Թաղ. Խորհուրդոյ անդամներէն
մին, անվերապահօրէն՝ աստ եւ անդ
պաշտօնական կամ անպաշտօն կերպով
կը յայտարարէ, թէ եթէ երբեք պատ-
գամաւորի ընտրութեան մէջ ինք եւ
իրենները, ակնկալուած կամ լաւ եւս
է ըսել, չափուած յաջողութեան հա-
ւանականութիւնը անիրականաբար
տէ, այժմէն իսկ պատրաստակա՞նու-

թիւն ցոյց կը տրուի, ի Պօլիս Պատ-
րիարքարան դիմելով (անշուշտ առ
այս խմբագրուած պատճառարանեալ
գրութեամբ) ընտրութիւնը ապօրինի
հետեւաբար ընկեալ հոչակել: Հիմնա-
ւել գիւտնադիտութիւն (!):

Անդին ժողովուրդը զգուած ի տես
Թաղ. Խորհուրդոյ անուղղայ եւ ապօրի-
նի ընթացքին, ճարահատ դարձան մը,
վերջ մը կուգէ տալ իրաց սոյն ան-
կերպարան կացութեան՝ որուն զօգոն
հանդիսատեսներն ըլլալու դժբաղդու-
թիւնը ըսեմ թէ՛ բարեբաղդութիւնը
այսօր մեզ վիճակած է:

Այլ սակայն ամեն ինչ սահման մը
ունի, ժողովրդեան վստահութիւնը ի
չարն՝ գործածող, կամ իր պաշտօնին
գիտակցութեան անտեղեակ, ներհա-
կաբար ըստ իւր քմաց՝ ազգային է՛ն
փափուկ եւ նուիրական հարցերու հետ
մաղաքողն, ըլլայ այն պաշտօնական
մարմինը՝ մը հաւաքարար, կամ ան-
պաշտօն անհատ մը առանձնակի, որ
մը չէ որ մը անխուսափելիօրէն անշուշտ
պիտի բաղիւի ժողովրդեան այն հա-
կակրական հոսանքին, որուն հանդէպ
այլեւս անկարող զգալով զինքը՝ եւ
զուրկ իր անարգ գոյութիւնը պահպա-
նելու չափ բարոյական հաստատուն
կուտանէ մը, կամայ թէ ակամայ տե-
ղի կուտայ հանրային արդար պահան-
ջին առաջ, եւ այս այնքան խայտա-
ռակօրէն:

Հետեւ չէ անշուշտ այն օրը, թէ
յորում բռնաբարեալ այդ բողբոքակող
ժողովուրդը այլեւս համբերահատ,
պիտի գիտնայ անտարակոյս իր վի-
ճակն ինքն իսկ իր ձեռքով վճռելու
առնական քայլն առնել՝ թէեւ այս ըլ-
լայ զոհողութեան կարօտ եւ մի քիչ
զառն, բայց եւ այնպէս իր դառնու-
թեանը մէջ իսկ քաղցր եւ գիւրաւար:

Չիկայ ո՛ր եւ է գիւտ կամ հնարք մը
որ կարող ըլլայ զրգուել եւ մանա-
ւա՛նդ ալեկոծեալ ժողովրդեան խուռնե-
նամ ընթացքին առջեւ իբրեւ թուր
ծառայել՝ զայն իւր յառաջադիւնալ
նպատակէն յետո ընկրկելու գիտումով
ո՛չ, մարդկան դիւային-հնարամտու-
թիւնը բարեբաղդաբար մինչեւ ցարդ
չէ կարողացած յղանալ եւ մանաւանդ
ծնունդ տալ այնպիսի զօրեղ ուժի մը
որը կարող լինէր գերազանցել ամ-
բոխայինը:

Այն օրը յորում ժողովուրդը իւր
պարտուց եւ իրաւանց գիտակցու-
թեան որոշ բարձունքին հասած՝ այլ-
եւս չուզեր հանդուրժել մանաւորնե-
րու քմահաճոյից խաղալիքն դառնալ.
այդ օրէն արդէն յառաջդիմութեան կա-
րեւորագոյն քայլն առած է, ու ա՛լ
այնուհետեւ ապագայ յաջողութիւնը
մեծաւ մասամբ երաշխաւորուած կը
համարուի:

Առաջնորդ, Թաղական եւ քահանայ,

ամենքն ալ իրենց կարգին ժողովրդ-
եան կամակատար մարմիններն են. հե-
տեւաբար հնազանդող անոր կամաց,
հակառակութեան փոքրիկ ընդդիմու-
թիւն մը շատ հեղ կրնայ անկուծի
տալնապ յարուցանել, որ գրեթէ
միշտ վերջի վերջոյ անվրէպ վախճանը
եղած է բոլոր եւ ամեն տեսակ պաշ-
տօնական մարմնոց:

ՎԱՌՆԱԹ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Պուգրէշ, 4/17 սեպտ.

Թաղականութեան հակառակ կու-
սակցութիւնն ցոյց մը ըրած է Աստու-
ծածնայ օրն րայց ինչ որ զրուած է առ
այս ՇԻՏԱԿ 2է, համառօտաբար պատմեմ
10—15 օր յառաջ կը լսուէր թէ վե-
րափոխման կիւրակէին, հոգաբարձու-
ները պիտի արտաքսեն, բայց թէ ի՛նչ-
պէս. չէր գիտուեր, Մանուկ Իվանդ
օկլու եւ իւրայինք իրենց մէջ որոշու-
ած կուտան Աստուածածնայ կիւրակէին
թաղականաց արտաքսումին եւ եկե-
ղեցւոյ բանալինը առնելէ վերջ մաս-
նախուժ մը Ազգ. գործերն յառաջ
տանի թէ մինչ ցնոր անօրինութիւն,
սոյն վճռոյն վերայ կուգան զաղթա-
կանաց մէջ եւ անոնցմէ 80—100 հոգի
համոզելով որ մասնակցին սոյն գոր-
ծոյն, մասնաւոր հրաւիրագրելով կը
կանչեն յեկեղեցի:

Եկեղեցւոյ նոյն օրուան պատարագն,
Ազգ. բարեբարուհի հանգուցեալ Տիկին
Մարիամ Բօթարեանի հոգւոյն համար
էր, պատարագի վերջեր թէեւ ընդ-
միջել կը սպառնային Իվանդօկլուի
կողմանէ բայց շարունակուեցաւ մին-
չեւ խաղող օրնեկնքի աւետարանը ու
պահպանիչը. պատարագի ջահանայն
տակաւին բեմին վրայ ուրիշ վար պի-
տի իջնալ ժողովրդեան մէջ ըստ սո-
վորութեան տաղաւար աւուրց մասունք
բանալու եւ ըստ սովորութեան տեղ-
ւոյս եկեղեցւոյ մէջ հոգեհանգիստ կա-
տարելու Մարիամ Բօթարեանի հոգ-
ւոյն. սոյն պահուն յանկարծ Մանուկ
Իվանդօկլու կը սկսի ատենարանու-
թիւնը որ ուղղակի պահպանողական
եւ ազատական եղիւ կառավարու-
թիւններու քաղաքականութեան ժողով-
ներու եւ անդամոց դէմ գանգատ մ'էր
ինչպէս նաեւ Բօմենական Ժիւսթիցիա-
յի դէմ որք չնորհիւ կրէր Կարապետ
Պետրոս եւ Կուցա Մելիք ու Անթոն
Վանիկի զեղծած են ճշմարտութիւնը
ու զ'պրն. Գ. Եռաքիմէսքու որպէս
հոգաբարձու բռնած են ցարդ որ Ազգն
ու եկեղեցին աւերած է, զրամներ
վատնած է եւ այլն. ժողովուրդը
մեծաւ մասամբ զաղթական առաջնոր-

գուժեցանք միայն քանի մը հոգի տեղացւոց սկսաւ պօռալ «գուրս գողը, անկցի գողը» այն ատեն թափեցան, հոգաբարձու Դանիէլ Եօաքիմէսքուի եւ իր եղբայր Վրայ, գաւազանի եւ կցի հարուածներով գուրս բերն եկին զեցիէն, իսկ պատարագին սպասաւորն ու սարկաւազը բնմին վրայ ապուշ կրթեալ մնացին: Եւ ի վերջոյ գուրս գու պատուիրեցին Դանիէլի եւ եղբայր կողերը կոտորակել վերջ, եկին զեցուց բանալիներն ալ կառնեն ու կանգնեցան քանի մը մոմերով վառ թողլով կը յանձնեն կառավարութեան: Կառավարութիւնն անցիալ տարի նոր օրէնք մը հաստատեց եկեղեցական եւ ազգային կալուածներու համար եւ մասնաւոր տեսչութիւն մը հեղինակեց: Սոյն տեսչութիւնն կրթական նախարարի հովանաւորութեան տակ է, բոլոր Բովնի եկեղեցիաց եկամուտներն կը գտնուէ ու ինք կը մատակարարէ ի մէջ այլոց ուղած է կառավարութիւնն որ հայ եկեղեցւոյ կալուածներն ալ յանձնուին իրեն ինչ որ հիմայ համայնակուլ ուսուր ընել կուզէ: Հոգաբարձութիւնն առ այս մինչեւ դատարան առաջնորդուի փորձուած է, բայց վերջապէս կառավարութիւնն յուսահատ թողած է ինչդիրն եւ չէ կրցած իւրացնել: Տեար Մանուկ Իվանդօկու եւ իւրայինք ի բոլոր սրտէ փափաքող ըլլալուն թէ եկեղեցապատկան կալուածոց տեսչութեան յանձնուի նաեւ մեր եկեղեցին: Եկեղեցւոյ բանալիներն կը յանձնեն նոյն տեսչութեան: Հետեւեալ օրն առաւօտուն հոգաբարձութիւնն կը ստանայ զայն: Կառավարութիւնը կը միջամտէ սոյն կուրիւն. եկեղեցւոյ բակի դռներն կը գոցուին եւ բռնածնին գաղթական եւ տեղացի (չատր գաղթական) կառաւնորդներն բոլորին: Կանայք եւ մանկուքն էլ ունեն, կը կոծեն կը մարին: Վերջապէս կը ընան թաղին բոլորեցալի Սէքրան, ուր մի առ մի Ձէ Ժամ հարցաքննելէ վերջ 8 գաղթական հայեր բանտ կը դնեն, որոց մին բնիկ Կեւսարացի երբեմն Լոգանի մէջ ուսանող պըն: Արշակ Թորգոմ կառավարութիւնն 6-7 օր հարցաքննելէ վերջ արժան կը դատէ աքսորել, իսկ միւս գաղթական

հայերն, երկու Պոլսեցի, մին Վանեցի երկու ալ Երեզացի կաղատուին դարձեալ հոգաբարձուաց շնորհիւ, եւ Մանուկ Իվանդօկուեաններ ինչպէս երախտագիտութեան մեր տղոց ամենուն ալ մէյմէկ անցագիր եւ մէյմէկ եռամսեայ կառավարական տուրք կառնեն եւ այսպէս առ այժմ բանտէն ազատ են: Խնդիրն դատարանին յանձնուած է, դատարանը պիտի վճռէ, առ այժմ հարցաքննիչին ձեռք է խնդիրը, տեսնենք ուր պիտի յանգի, բայց շատ հաւանական է որ բանտարկութեան դատապարտին կուրի պատճառ հանդիսացողներն ու մամաւեցողներն: Հոգաբարձութեան օրգանաւորութեան գաղթական հայոց մեծամասնութեան հետ կառուած են քահանայից դէմ բռնուլ թէ ինչու ըստ ին եկեղեցին տալիսն ստարտած չէր: Իրենք (քահանայք) կըսեն թէ ճիշդարարի տուրքն են տակաւին պաշտօն ունէինք կատարելիք ժամանակները ընցած չէր, ըսելով: Բնական է թէ քահանայից սոյն յայտարարութիւնը կը վստահէ զընդդիմադիրն: Կարող էր քահանային հայեր իրենց տղաք չեն զրկել զպրոց, կը բռնեն տունը, ընդհակառակը այս տարի միայն երկու կարգեր ունենալուն դպրոց փոխանակ չորսի, հայերն համար որոշուած չէ ժամը կը բաւէ եւ աւելի օգտակար կընայ ըլլալ: Բայց գաղթականը համոզուած են թէ (որ սխալ է) կառավարութիւնը պիտի գրաւէ ամեն ինչ եւ պիտի փակէ դպրոցն ու եկեղեցին, այս համոզմամբ տղայք կը զրկուին դպրոցէ: Էնքոյիկներ պիտի դառնան այս տեսակ պարագաներու մէջ, ընական է: Բայց կը ցաւիմ որ անմեղներն կը տուժեն: Այս կերպիկ երկու պատկեր տեղի ունեցան քաղաքիս մէջ, գաղթականք Մանուկ Իվանդօկուի շնորհիւ դիմած են իրենց իր կարգապահ քննիչ թիւլպէնի որ գաղտնի գալով Պուրէշի պատկերներ կը կատարէ, Հոգաբարձութիւնն զինքը կը հրաւիրէ բացատրութիւն պահանջելու համար, բայց թիւլպէնի ձեռքն չէ անսացած: Զայս ի գիտութիւն Ազգ. Պատրիարքարանի ծանուցած է հոգաբարձութիւնը:

Բովնի Ժողովուրդն զրգուած է գաղթական հայոց դէմ, տեսակ տեսակ յօդուածներով կառավարութեան ու շաղթութիւնը կը հրաւիրեն վստահաւոր նկատելով հայերը: Ուրեմն ինչ եղաւ այս խառնակութեան արդեւորք. ըստ իս ոչինչ: Վարենք հոգաբարձութիւնն պիտի մնայ յաւարտ շրջանի, այսինքն մինչ ինոր տարի. եւ նոր ընտրութեամբ միայն կարելի է յաջողիլ ընտրել ո՛վ որ արժան կը դատուի. ուստի, քանի որ միայն 4 ամիս կար նոր ընտրութեան, հարկն չէր պահանջել, կը կարծեմ որ սոյն դէպքն հեղինակուել, այսու կը վերջուի որ նոր գաղթականութեան չկարենայ յաջողիլ Ազգ. զեկը իր ընտրելիաց յանձնելու ընտրութեան պահուն: Կաղթականք, թող որ, ընտրողական իրաւունք չունին, բայց նոյն իսկ Իվանդօկու իւրայնոց մէջ վարկարկել ըլլալ սկսած է: Գուրբէշի մէջ այս օրեր պուլկարաց սատիկի հակողութիւն կընեն, կընամ ընել օրինաւոր հալածանքի մը կերպարանք կընայ ստանալ քանի մը օրէն կը գրեմ: Օր չ'կայ որ 10, 20, 5, 15 պուլկար չ'աքսորեն, զանոնք յաղափոխական նկատուելով: Թ.

ԹԻՒՐԲԻԱ ԵՒ ԱՍԵՐԻԿԱ

Օգոստոս 27ին Կ. Պոլսոյ գեսպան Լէյնմէնէ հասած հեռագիր մը կը հաղորդէ Պէյրութի փոխ-հիւպատոս Ուրիլիմ Ս. Մէճրսընի սպանուելը կիրակի օր երբ վերջինս կառքով քաղաքին մէջ կը շրջի ելեր: Այս հեռագիրը մեծ զայրոյթ յառաւ բերաւ թէ մամուլին եւ թէ կառավարական շրջանակներուն մէջ, ու ամերիկեան կառավարութիւն, արտաքին գործոց փոխ-նախարար Տարլինկի միջոցով խիստ հրահանգներ զրկեց Պոլսոյ Լէյնմէնին, եւ միեւնոյն ժամանակ հեռագրով հրահանգ զրկու եղաւ ծովակալ Քոթիլի որպէս զի Ամերիկայի Ներքապական նաւատորմով յատշանայ թիւքական ջուրերը:

Դեսպան Լէյնմէն իր ստացած հրահանգներու համեմատ թուրք կառավարութիւնը պատասխանատու կը ճանչնայ այս ոճրին ու ի միջի այլոց՝ խիստ քննութիւն մը կը պահանջէ այս սպանուելու խնդրոյն մէջ բռնուած անձերու դէմ, եւ յանցաւորներու անմիջական պատժուելու: Արտաքին գործոց նախարար Թէֆիք փաշա բոլորովին կանգիտանայ սպանութեան պատահարը եւ կը խոստանայ պէտք եղած քայլերը առնել ոճրին հեղինակները պատժելու համար: Դեսպան Լէյնմէն Թէֆիք փաշայի պատասխանը հեռագրելով կը թելադրէ Ամերիկեան կառավարութեան զրահաորներու առաքումը յետագիւլ ինչի նոր մանրամասնութիւններ առնելու, բայց նախագահ Ռուզվելթ իր որոշման վրայ կը յամարէ: Տեղական թերթերը կը գրեն թէ նախագահի այս հաստատ գործողութիւնները մասամբ արդիւնք են Ամերիկայի Միաբնակչական Պատերկրութեան կողմէն Արտաքին գործոց նախարարին ուղղուած մէկ հեռագիր-տեղեկագրին, որուն մէջ ընկերութիւնը կը հաղորդէ թէ Ռարբելի մէջ թուրքերը փորձ ըրած են նոյն ընկերութեան հիմնած Նիկոտա Քոլէճը այրելու, եւ թէ այդ կողմերը տիրող կոչութիւնը այնքան սպառնալից է որ նոյնիսկ Ամերիկեան քաղաքացիները իրենց կեանքները միշտ վստահի մէջ կզգան:

Պէյրութի մէջ 120,000ի մօտ բնակչութիւն մը կը գտնուի որուն 40000ը մահմետական կը հաշուեն, բայց ասոնք իրենց փոքրամասնութիւնով հանդերձ միշտ տիրապետող եւ ինչից տարբեր եղած են Պաշտօնական լուրերէ կը տեսնուի թէ՛ վերջինս մահաւանդ այդ քաղաքին մէջ եւրոպացիները այնքան կը նեղուին որ նոյն իսկ ցորեկ ասան չ'են համարձակիր առանձին դուրս ելնել: Եւ անցեալ երկու ամիսներուն մէջ շատ ամերիկացիներ յարձակումներ կըրած են մահմետականներէ: Նախագահ Ռուզվելտ երկար առեւելք վեր մեծ զգուշութեամբ կը հետեւէր թուրքիոյ մէջ տիրող չփոթ գրուութեան, ուր անշուշտ մեծ տեղ մը կը

ՊԱՏԿԵՐ ՄԸ 1877-Ի
ՌՈՒՍՕ-ԹՈՒՐԿ ՊԱՏԵՐԱԶՄԵՆ

(ՔԱՐԳ. Ք. Պ. ՆՕՐՄԱՆԻ ՔԱՅԱՅԻ ԲՂԱԿՈՒԹԵՆԵՆ)
Շատ չանցած Նապի Չայ հասան, երբ, յանիարծ, երկու կողմերէն վեր ցատկեցին հազարաւոր հետեւակներ, որոնք, հրետանի հրետանիի հետեւէ տեղացանով սարսափահար թուրքերուն մէջ, անոնց մէջ նետուեցան սուրճներով: Մուխթար այժմ կը հասկնար իր սխալը: Իր յառաջողով վաշտերը ետ դարձան եւ մեծ չփոթութեան մէջ ջանացին իրենց խրամատներու սպահովութիւնը ձեռք բերել, բայց Ռուսները արդէն իրենց եւ ամրութիւններուն միջեւ կը գտնուէին: հարիւրաւոր քաջ Օսմանցիներ զնդակահար իրենց մինչ կը ջանային, սրտոտ բայց ապարդիւն փորձերով, իրենց ճամբան կոփել Ռուս հետեւակներու խիտ զանգուածներուն մէջէն, մինչ ուրիշ հարիւրաւորներ երեսներ կախած վար նետեցին իրենց զէնքերը եւ գերի յանձնուեցան: Մուխթար չէր կրնար անտես ընել որ արանք դադարեցր պիտի ըլլար. սակայն եւ այնպէս, պատերազմի սկիզբէն ի վեր իր ցոյց տուած զիւցադնութեամբ, երկու գումարտակներու զուլիւր անցաւ եւ ջանաց Ռուս յառաջխաղացութեան հեղեղը կասեցնել: Սակայն շատ ուշ էր, վարակումը ծաւալէր էր, եւ կեղծոյն զօրքերուն մեծամասնութիւնը, չը նայած իրենց հրամանատարին անձնապէս ցոյց տուած օրինակին, աղերսներէն, հրաման-

ներուն, չը նայած իրենց սպաններուն սպանալիքներուն, ետ դարձան եւ դէպի Երզրում վաղցին: Ի գուր մէյմէկ փաշա ջանաց կարգի բերել այս մարդիկը: Ի գուր ցոյց տուաւ որ, եթէ միայն աջակողմի, Թոփալաքի վերեւը գտնուող Բուրլին յարկին կարող պիտի ըլլային ուսական յառաջխաղացումը արգելել եւ յամենայն դէպս իրենց հալածումը կասեցնել. անօգուտ էր այս բոլորը: Որքան ժամանակ որ արեւը պայծառօրէն փայլէ թուրքը ց'մահ կը կուրի, ջայց խաղին մէջ երբ կ'որոնցնէ սկսի գէշ խաղացող մըն է ան: Դէպի Երզրում առաջնորդող ճամբուն վրայ տեղի ունեցած տեսարանը անկարելի է նկարագրել: Զինուորական պիտոյից մատակարարութեան համար բանակին ուղեկցող բազմաթիւ արջառներ, ուղին փակած էին, եւ անոնց մէջէն Չէրքէզ եւ Քիւրա հեծեալներ կը ջանային ճամբայ մը բանալ, մինչ հետեւակները, երկու կողմի բլրակներուն վրայէն խոյանալով, քաղաքը սպառնալու էին: Երկու Ներպաքի սպաններ, Մէհմէտ փաշա եւ մէյմէկ փաշա, որոնք թանակին երկու բազուկները կառաւորողէն, շատ վեհանքօրէն վարուեցան: Իրենց զինուորներուն կողմանէ ցոյց տրուած հաստատուն ճակատը, արդ'ամբ, Ռուսական ամբողջ բանակին արագ յառաջխաղացումը կասեցուց եւ այս պէտով ուշացուց Երզրումի գրաւումը: Եթէ չփոթութիւնը իրենց մարդոց մէջ ծաւալած ըլլար, Հայման, անկասկած, Տէվէ-Պոլուսի վրայէն անցնելով, նոյն գիշերը Հայաստանի մայրաքաղաքը հասած եւ գայն դրաւած պիտի ըլլար: Կառավարիչը, պարտութեան լուրը առնելուն, զստալիքներու մուտքը

արգելելու եւ քաղաքը կողոպտուէ զերծ պահելու համար քաղաքին դռները փակեց. բայց կէս պիչերի ատենները, յուզումը բաւական չափաւորուած ըլլալով, զօրուոր պահակներ գրուեցան դուռներուն մօտ եւ մարդիկը արտօնուեցան մեղմիւ եւ կարգով ներս մտնել: Բաւոր զօրանոցները հիւանդներով եւ վիրաւորներով լեցուած էին, այնպէս որ փախտակարներուն համար գլուխ վնակու տեղ չէր մնացած: Դինչգիւ իրենց սարսափներուն վրայ իբր նոր յաւելում մը, գիշերուան ժամը 11-ի ատենները սատակ կարկուտ մը սկսաւ տեղալ: Փողոցները սովալլուէկ եւ խօլացնող զինուորներով լեցուած էին, որոնք, իրենց պատահած վերջին գոհարութիւններէն պարտասած, ուժեղին սպառած, ջանացին զուրկ մէջ խաղաղութիւն փնտռել, ընկղմելով ինքզինքնին ցիւլին մէջ: Ոչ ոք զիտէ թէ ուր գնաց Մուխթար փաշա այդ գիշերը: Կէս գիշերէն քիչ մը վերջ մէյմէկ եւ Մէհմէտ փաշա քաղաքը հասան: առաջինը իր թիւղանքները ետ քաշելով յաջողեցր էր փախուստը տալ առ'անց թշնամին նշմարուելու: Մէհմէտ փաշա, սակայն այսքան բաղդաւոր չէր: Ռուսական վաշտ մը զինք հետապնդեց Երմեր նահանջելու պահուն եւ Տէվէ-Պոլուսէն մինչեւ փաշա Բուրլին, պարիսպներուն մինչեւ երեք մղոն մնացած, ստիպուել էր կուրի իւրաքանչիւր քայլափոխին հետեւեալ առաւել կարելի էր որոշ կերպով դիմել Ռուսները ձէվէ-Տաղը գաղաթը, ուր կարողէին բերդակն իր կառուցանելով եւ քաղաքի ամրակոծութեան պատրաստուելով: Շատ դժուարին է որ եւ է նմանութիւն ընել թիւղական կողուստներուն վերաբերութեամբ, բայց սպահովապէս կա-

գրաւէ մակեդոնական շարժումը որ օրուան ամենաջերմ խնդիրը դարձած էր ամերիկեան մամուլին մէջ։ Ու Մէ- ճըլընի սպանութեան լուրը սոսկալի վարոյթ մը յառաջ բերաւ եանքինե- րու խորոխտ եւ յաժառ հոգիներուն մէջ, որոնք արգէն թուրքիոյ մակե- ղոնացիներուն վրայ ի գործ դրած բարբարոսութիւններէն տաժանագին- օրէն սրտնեղած, կուղէին օր առաջ վերջ մը տալ անոր պատու հաս գոյու- թեանը։

Երկու օր առաջ թուրքերու ձեռքով Քրու չօլա քաղաքի աւերումին առթիւ տեղական թերթերը մէկ ձայնով կը բողբոջէին այդ անորակելի դադանու- թեանց դէմ եւ եւրոպական միջամտու- թիւն մը անհրաժեշտ կը տեսնէին։ Ամերիկայի երեսիլի գէփերը իրենց մասնաւոր նամակներով կը մասնակ- ցէին մամուլի տէրջ բողբոջին։ Պապի ներկայացուցիչն սկսեալ մինչեւ ա- մենաերեսիլի օրինադէտները։ Ասոնց- մէ մին կը գրէր թէ Ամերիկեան կա- ռավորութիւնը միշտ համակրած է ճնշուած ժողովուրդներուն, որուն մէկ արդիւնքը տեսնուեցաւ Ռուսիոյ մէջ կոստորուող հրէաներու խնդրոյն մէջ, եւ պէտք է որ միեւնոյն մարդասիրա- կան շարժառիթներէն մղուած գործէ մակեդոնացիներուն համար, ու ցոյց տալ Պերլինի դաշնագրութիւնը ստո- րագրող պետութիւններուն թէ իրենց պարտականութիւնները Ամերիկան ի- քը կատարելու վեհաձայնութիւնը ունի։

Պէյրութի այս աղուոր առիթին վը- րայ Ամերիկայի եւ թուրքիոյ միջեւ պատերազմ մը անխուսափելի կը նը- կատուէր հոս, բայց յանկարծ Պոլսէն զեպան Լէյլաթէն եկած 28 թուով հեռագիր մը կը հերքէր փոխ-հիւպա- տոս Մէճըլընի սպանութեան լուրը։ Սպանութեան փորձ մը եղած թէեւ անձաւթ անձէ մը, բայց զնգակները վրիպած են եւ փոխ-հիւպատոսը ան- վնաս ազատած է, եւ տեղւոյն վային գացած անձամբ ցաւ յայտնած է պա- տահարին համար։ Այդ լուրը՝ թէեւ մեղմացուցիչ՝ բայց բնաւ չի նուազե- ցուց եանքիներու զայրոյթն ու ա- տելութիւնը թուրքին դէմ։ Ռուզվէլթ

ըսած է այս առթիւ թէ փոխ-հիւպա- տոսի ծրարաններու շատ ուրախալի է ինքնին, բայց առի մազի չափ փո- փոխութիւն պիտի չմտցնէ ամերիկեան ներկայ քաղաքականութեան մէջ, մար- տանաւերը կրկին պիտի չարունակեն իրենց ընթացքը զէպի թրքական ջու- րերը, որովհետեւ ամերիկացիի մը վրայ գնդակներ ածակելը այնչափ ոճիւր մըն է որչափ զայն սպաննելը։ Նոյն 28 թուականով հեռագիր մը կը հաղորդէ թէ ծովակալ Քոթօն Նոյն երեկոյ կը թողու Վիֆլանշը ամերիկեան կրք առաջնաճարգ մար- տանաւերով ու կը յուսացուի թէ ուրբաթ օր կը հասնին թրքական ջուրերը։ Երբ ծովակալ Քոթօնի կը հարցնեն իր բռնի զինքը կը պատաս- խանէ. «Այս առաւօտեան թերթերու լուրերը կը կազմեն իմ ուղղեցի՞ն»։

Արտաքին գործոց փոխ-նախարար Տարիսկը մասնաւոր մանրամասնու- թիւններ ուղած է Պէյրութի եւ Սար- քերթի հիւպատոսներէն այս տեղերու մէջ տիրող խռոնակութեանց մասին։ Պօրտի ընկերութիւնը այս առթիւ մասնաւոր դիմում քած է նախարար- րին Սարքերդի մէջ ձեռքաւորած եւրոպայի Քոթէնի ուսուցիչներէն բոֆ, թէնէքէնեանի համար, որոն յանցա- ւորութիւնը ապացուցանող փոքրիկ փաստ էլ իսկ չունին։

Այս պատահի՞ր կը յուսացուի՞ թէ լաւ գործի մը պիտի տայ Ամերիկեան կառավարութեան ասկէ մէկ երկու ա- միս առաջ թուրքիոյ ներկայացուցած պահանջներուն, որոնցմով կուգէր մասնաւոր ապահովութիւն եւ ազա- տութիւն ձեռք բերել ամերիկեան քա- ղաքացիներու երթեւեկութեան հա- մար, զորս թիւրք կառավարութիւնը մերժած էր։ Օգտակար պիտի չըլլա՞ր արդեօք եթէ հայերը հոս դիմում մը ընէին նախագահին, օգտուելով ա- սանկ հազուադէպ առիթէ մը։

Ա. Տեւրիպալեան
ՊՕՄԻՍ, 29 օգոստ.

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Արթ. Տէր Սարգիս քնյ. Ղարիպ- անս պատկառութեան մը առթիւ Պալ- չըզ գացած ըլլալով հաճած է ինպատ- քաղաքիս Աղք. Ընկերութեան հան- զանակութիւն մը կատարել, հետեւ- եալ բարեւէր ազգայիններէն։

Պ. Կարապետ Տ. Մկրտիչեան 2 ֆր.
» Գրիգոր Կարապետեան 2 »
» Յարութիւն Յովակիմեան 1 »
» Մարտիրոս Սամուէլեան 1 »
» Սարգիս Մարտիրոս 1 »
» Յարութիւն Բէքմէղեան 50 մս
» Հրանդ Զիլաճեան, Ա.
Պոյաճեանի ամուսնութեան առ- թիւ փոխան հարսանուէրի 3 ֆր.

Գումար 10, 50

Այս առթիւ Աղք. Ընկերութիւնս ի դիմաց կարօտեալներու կը փութայ իր շնորհակալութիւնը հրապարակաւ յայտնել, թէ Արթ. Տէր հօր բարեւէր ջանքերուն եւ թէ նուիրատու ազգայ- նոց ինչպէս նաեւ այն կարգ մը անձ- նաւորութեանց որոնք ալ խոստացած են իրենց նուէրներով միմիկարել չքա- ւորները եւ քաջալիւրջ Աղք. Ընկե- րութիւնս։

Ի դիմաց Աղք. Ընկերութեան Վաճառի
Ատենապետի Պ. Սահակապետի
Յ. Ազապալար Պ. Քիրմէնեան
(Կնիք)
Վաճառ, 8 Սեպտ.

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

ԱղթԱՄԱՐԻ Կաթողիկոսի ընտրու- թեան անհրաժեշտ պէտքը բացատրող նամակներ ու տեղեկագիրներ կը հաս- նին Պատրիարքարան։ Կը խորհուի այ- ժմ Տ. Մարգարիտ եպիսկ. Տէրուն- եանը երուսաղէմէն Սղթամար զրկել իրր եկեղեցական պատուիրակ, որպէս զի նախնական կազմակերպութիւն ընէ ընտրութեան համար։ ԷջմՄԱՍՆԷՆ կիմացնեն թէ վեհ.

Կաթողիկոսը՝ հակառակ տերող սաս- տիկ տաքին կը մնայ Վանքին մէջ, եւ ոչ իսկ Բիւրակնի մօտակայ ամարա- նոցը կերթայ, չուզելով հեռու մնալ Մայր Աթոռէն, ինչ ինչ զբաղումներու պատճառաւ։

ՊԱԼԱՅԻՔԻ փոքրաթիւ ազգայինները լաւ խորհուրդ մը յղացել եւ անոր գործադրութիւնը սկսել են։ Այդ փոք- րիկ քաղաքին մէջ 22—25 հայ ընտա- նիք կը բնակին. հետեւապէս ամուսնաւն 20—25 փոքրիկներ ի չգոյն ազգային վարժարանի ստիպուած են կամ պուլ- կարաց վարժարանն յաճախել եւ կամ տունը (աւելի ճիշդը փողոցը) մնալ։

Այս անգամ ուրախութեամբ լսեցինք թէ այդ փոքրիկ քաղաքը որոշած է վարժարան մը բանալ «Հայկական երկսեռ կրթարան» անունով, Այս առ- թիւ նախատեսուած տարեկան ծախքը չուրջ 1000 ֆր. ոտորագրած են, մէն մի անհատ իր կարողութեան չափով։

Մեկ կը մնայ յաջողութիւն, հաս- տատանութիւն եւ յարստութիւն մաղթել։

ՊԱԼԱՅԻՔԻ Պատր. Փոխանորդը Տ. Վահան Մ. Վ. Յակոբեան չարաթ օր Սօֆիայէ քաղաքս հասաւ Պատգամա- ւորը ընտրութեան կնճառութիւնը յարգելու համար։ Փոխանորդ հայրը այս անգամ եւս մտադիր կընէր, թաղ. ինտրուրդ անուանուող զոյգին վրայ ծանրացող ամբաստանութիւն- ները առանց պարտելու, երկան կարճ պատգամաւոր մը ընտրել տալ ու քաշ- չուիլ Սօֆիա։ Բայց իմացանք թէ ժողովուրդին կողմանէ խուճը խուճը ազգայիններ Հայր սուրբին ներկայա- նալով խնդրած են որ առժամանակեայ թաղ. ինտրուրդ մը եւ նոր Ընտրող. ժողով կազմէ։

Ի Խ Թ Ա Ր

Էլան կազմեա պէտէլինի հօտէ մէջ իշ օրան միւրիվէթու ա- պօնէլէրիմիզ՝ սէնէլի հալիէնին տօ- գու զընճը ալըմտ ապուլընտըղմը. զը տէր խաթըր իտէրէք, պիլա թէէլիլի պարճլորըն էօտէմէլի. տիլլէր։

ընկէ է ըսել թէ 3000 գերիներ եւ 42 թնդանօթներ թնամներուն ձեռքը ինկան, մինչ 2500—3000 հո- գի միւսան կամ վերաւորուեցան։ Ամերիկայ Մուխթար փաշային համար խիստ հար- ուած մըն էր, որովհետեւ, ասով, պատերազմի մի- ջոցին, յարձակողական դիրք բռնել կարենալու վերջին յոյսը կը մարէր։ Ինք, սակայն, իր մար- ղոց ոգեւորութիւնը վերակենդանացնելու ջանքերով զբաղեցաւ։ Ամէն օր ամրոցները այցելեց, իր զինուորներուն քանի մը կորովի քաջալերական խօսքեր ուղղելով։ Պատերազմական ժողով մը գումարեց պալատին մէջ, որուն հրաւիրեց Մահմետական եւ քրիստոնէայ բը- նակէթիւն երեսկիները, եւ հոն անոնց բացատ- րեց պաշարագլին իրական կացութիւնը։ Իրենց պե- տի եռանդով վառուած, եւ զօտեպնդուած այն յոյսով թէ կարելի օգնութիւն եւ պաշար չուտով պիտի հասնին, ասոնք, իրենց ամէն կարելին ընե- լով, քաղաքը պաշտպանելու համար, իրեն օգնել որոշած ըլլալին ծանուցին։ Ամուս 6-ին Ռուս զօրավարին կողմանէ պատգամաւոր մը հասաւ եւ տեղին յանձնումը պահանջեց։ Մուխթար ասոր պա- տասխանեց թէ էրզրում Սուլթանին կը վերաբերէր եւ ոչ իրեն, եւ թէ մինչեւ որ իր սիրովէ հրա- հանող շտապար ինք անկեղծ էր պատասխան տալ։ Ինք անմիջապէս Պոլս հեռագրեց, ծանօթացնելով Դուսն. քնակիչներու մէջ գոյութիւն ունեցող զին- ուորական զգացումներն ու իր անձնական որոշումը, որով կը նախընտրէր իր կեանքը զոհել քան թէ հրաժարիլ իր պարտականութենէն։ Հետեւեալ առաւօտ պատասխան ստացաւ որով ի-

րեն հրահանգ կը տրուէր պաշտպանել տեղը մինչեւ վերջին մարդը եւ մինչեւ վերջին փամփուշտը։ Այս իմաստով նօթա մը ուղղուեցաւ զօրավար Հայմանին, որը Մուխթար փաշայի ծանոց թէ երեք օրուան շնորհ մը կընէր իրեն, եւ եթէ այս պայմանաժամի լրանալէն վերջ չը յանձնուէր, ուրախութեամբ պիտի սկսէր։ Ամուս 7-ին Ռուսները քաղաքին արեւելեան կողմի բլուրներուն վրայ բերդակ մը կանգնելու զբա- ղեցան, Մեր լսածին նայելով, ստիկայ մեծկակ գործ մը ըլլալ կերելի 200 եւրոս երկարութեամբ, տասը ոտք բարձր եղբերով եւ առջեւ խրամով մը։ Թօփ-Տաղէն 2,500 եւրոս հեռու կը գտնուի եւ կա- տարելապէս քաղաքին կը տրիանայ։ Ասոր կառու- ցումին համար գիշեր ցորեկ մարդ աշխատեցին։ Պաշարման այս ամբողջութիւններու կառուցումը ար- գիւնէ փորձելու համար Մուխթարի ուժերը շատ տկար էին։ Ինք պաշար հաւաքելէ եւ մօտաւորաւ յարձակումը դիմադրուելու համար կարգադրութիւն- ներ ընելէ զատ բան չէր կրնար ընել, գիտնալով իսկ որ այս յարձակումը շատ չէր կրնար ուշանալ։ Այս նպատակին համար էրզրում թերեւս կարուէն աւելի լաւ կը յարմարի չըլլալով աւելի զօրաւոր կողմնա- կի երեսկով մը կը պարզէ եւ չէ կարելի ձեռք ձգել մինչեւ որ պալատը չը խրամաւորի։ Երբագիծը երեք միոնի չափ է, մինչդեռ կարսինը մօտաւորա- պէս տասը միոն է, եւ կարսի ամրոցները, որ մենք արգէն տեսնք, իրենց տկար կողմնակի երեսկովով, կրնան յարձակումով շատ աւելի դիւրութեամբ գրա- լել։ Էրզրումի պարսպներուն վրայ 150-էն աւելի Բրուքի պաշարման թնդանօթներէն կը գտնուին եւ

ասոնցմէ շատերը տանուած իր հարկաւորութիւն արա- մագիծ ունին։ Պահապան զօրքերը, զինուած քնա- կիչներն ալ հաշուելով, որոնց թիւը քանի մը հա- զարներու կը հասնի, 20,000-էն պակաս չը կրնար ըլլալ։ Ամերիկայ պարսպներու պաշտպանութեան հա- մար իւրաքանչիւր ետրտալին չորս մարդ ըսել է եւ որ յարձակում մը շատ արկածալից ձեռնարկութեան մը կրնայ փոխել։ Նոյ. 9-ին առտուն, զօրավ ր Հայման անխոհեմ փորձ մը ըրաւ ըստն յարձակումով արտաքին պատ- նէչները գրաւելու։ Հարաւ-արեւելեան կողմի Աղի- ղի գիրքին եւ հարաւ-արեւմտեան կողմի Քիւրէմիտի ամրոցին վրայ զօրաւորներն ուղղուեցան. սակայն գիշերուան մթութեան կամ լրտեսներու վատու- թեան պատճառաւ յարձակումները միանաբար չը գործուեցան եւ այսպէսով փորձը անյաջողութեան մասնուեցաւ։ Կերելի թէ Էրզրումը գրաւելու լաւագոյն միջոց- ները նկատուելու եւ խնդիր վիճարանութեան երթար- կելու համար, Տէվէ-Տաղի դազաթը, Հայման զօրա- վարին վրանին մէջ, նոյ. 8-ի գիշերը պատերազմա- կան ժողով մը տեղի ունեցած է։ Ամէն ոք կը տես- նէր որ լաւագոյն առիթ մը կորսուած էր նոյ. 4-ին, երբ, եթէ փութով Մուխթար հետապնդուած ըլլար, ամենայն հաւանականութեամբ, քաղաքը առանց կոտորելու պիտի յանձնուէր։ Սակայն եւ այսպէս, շատ մը պատճառներ ճիշտ այն ատեն այս տեսակ շարժում մը շատ վտանգաւոր կընէին։

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ր Դ Ի Ա

Սթանպոլտան Տնկվնիքէ պիւ-
տիրիւնն պիւր ընկալեթէ կէօրէ,
Բուս Բաթրիքի Եւրոպա պիւր
պէյաճնամէ թագաւորի իւն՝ Մա-
քէթոնիա ահպալընտան պահս ի-
տուպ, իւթիւլտա պուլկար էք-
սարքըն թէշվիգաթընը կէօսթէր-
միշ, վէ սիւքիւնէթ հիւքմ իթ-
տիրմէք իշիւն պուլկար տէսթթ-
լարըն մէզուսիյէթի ազալթմազ վէ
Բուս Բաթրիգհանէսինէ եէնի մէ-
զուսիյէթիւք վէրմէք իգթիգա ու-
տըղընը արզ իթմիշ տիր:

— Գարատաղ Բրէնսի քէնտի
րէսմինի վէ Տանիւո նամ պէօյիւք
գօրտօնը Սատրապաւա իթտա իթ-
միշ օլմաղէ, Սթանպոլ Գարատաղ
էլլիսի Մ. Վուքոփիշ անլէրի միւշա-
իւնյէ թագաւոր իթմիշ տիր:

— Թիւրք մէնպալարընտան ա.
լընան վէ Սթանպոլ կաղէթալա-
րընտա կէօրիւնն հապատիսաթա
ինանմազ լազըմ կէլիւր իսէ, հէր
կիւն եիւլլէրմէ գօմիթալար էօլ-
մէքտէ վէ պիւթիւն չէթէլէր մահվ
իտիւմէքտէ տիրէր. չէօյլէքի՝

Օհրիտա գազաւընտա 200 քի-
շիլիք պիւր գօմիթա չէթէսի մահվ
օլմուշ:

Գօճանօսա եազըն 60 գօմի-
թաճը գաթիլ օլընմըշ, վէ սաիրէ:

— Պապը Ալի Բուս վէ Աւսթ.
րիա էլլիւրիւնն պիւրէր պէյաննա.
մէ վէրուպ, 24 քիշիլիք պիւր չէ-
թէ Սօֆիատան Ճուսաւի. Պալա
թարիգի իւն՝ վէ 200 քիշիլիք տի-
կէր պիւր չէթէ Էկրի. Բալանգա.
տան Գէօսթէնտիլ թարիգի իւն
Մաքէթոնիայա կիրմիշ օլտըղը,
վէ Բուսմանիտան 400 պուլկար
Սօֆիայա կէլուպ գօմիթէթտէն
օրիսհանտըղը պիւրիւրմիշ տիր:
Գէզա Պապը Ալինն պէյանը իւզ-
րէ, չէթէլէր պա խուսուս Ուլա-
նիք վիւլայէթի. տախիլիտէ սու
գուլուլարընը գէհիւրէմէյէ պաշ-
լամըշլար:

— Մանասթըր վիւլայէթիտէ
սէքիզ միւսատէմէլէրտէ 312 գօ-
միթաճը էօլմիւշ, պիւր չօգ ճէպ-
հանն վէ մուշիւր էվրազ էլէ կէշ-
միշ:

— Բուս էլլիսի Մ. Ջիւնվիէֆ
սօն տէֆա Սուլթանըն հուզուրը-
նա չըգուպ, Մաքէթօնիտա չէ-
թէլէրի թագաւոր իթմէք պէհա-
նէսի իւն սէֆիւ էհալիւնն իւզէրի-
նէ իճրա օլընան պարպալըրզարա
նիհայէթ վէրիւմէսինի թալէպ
իթտի: Սուլթան պու խուսուստա
եէնի էմիրլէր վէրմիշ օլտըղընը
սէօյլէրուպ, չէթէլէրի տէօրթ
գըսմընտան իւշիւ մահվ օլընտը-
ղընը վէ գալանըն տախիւ եազըն.
տա թէսղիւր օլընաճաղընը պէյան
իթմիշ տիր:

— Վարնա պէլէտիյէ քեաթիպ
լէրինտէն թօտօրու թիւրքիայա

կիրմիշ օլուպ, Լօղէնկրատ սան.
ճաղընտա 14 արգատաշլարը իւն
տէրտէսթ օլընմըշ տըր:

— Մանասթըր վիւլայէթիտէ
գօմիթա ընկալէրի պիւր իւնանմէ
նէշրի իւն էհալիւնն ճէսարէթ վէ.
րուպ, սէպաթիւն ըսեանա տէվաժ
իտիւնէճէկինի իւթաւ իթմիշլէր:
վէ «սէրպէտիյէթ սաաթը եազ-
լաշմըշ» տէյուպ, էվրոքանըն եա.
գընտա միւստալէլէ իտէճէկինն իւ-
միտ կէօսթէրմիշլէր:

ՏԱԽԻԼԻԷ

Էտիրնէ վիւլայէթիտէն գաշուպ
Պուլկարիա սինօրընա իլթիճա
իթմիշ օլան պիւլլէրմէ պուլկար
քէօյիւլէրին պիւր պէօյիւք գըսմը
Պուրկաղ վաթօրը իւն չէհիւրմիշ
կէլմէքտէ տիր:

— Միւտէրրիս Մ. իվան կէօր-
կիւն վէ Տօք. Միլիթիշ ճուսա
կիւնիւ Սօֆիատան հարէքէթիւն
ինկիլթէրայա կիթտիլէր: Պու-
զէվաթ ինկիլթ հիւքիւմէթիւնի վէ
էհալիւ Մաքէթօնիա մէսէլէսինի
միւստաթա իթմէկէ տալէթ վէ
թէշվիգ իտէճէլէր:

— Աւստրիանըն վէ Բուսիւնըն
Պուլկարիա հիւքիւմէթիւն վէր.
տիլլէրի պէյա ամէյէ Ալմանիա
տէվլէթի տախիւ գուվլէթ վէրմիշ
տիր. եանի՝ էկէր Պուլկարիա թուր-
քիա իւն մուհարէպէյէ սիւլիւք ի-
տէր իսէ քիմսէտէն եարտըմ պու-
լամայաճազ, վէ նիհայէթի Աւստ-
րիանըն Բուսիւն իւն պէրապէր
թանգիւ իթտիլլէրի իսլահաթը
եալընը իճրա իթտիլլէրէլէր:
Շու հալտէ Սօֆիատաքի Աւստրիա
գօնսօլտը Պուլկարիանըն րահաթ
օթուրմաւընը վէ չէթէլէրին կէշ
մէսի մէնն իթմէսինի նաւահաթ
իթմիշ տիր: «Աքսի հալտէ Բուս
վէ Աւսթրիա տէվլէթիւրի իգթի-
զաւընը տիւլիւնէճէլէր վէ թիւրք
հիւքիւմէթիւնն տախիւ ճէնէպիլէր-
տէն մէմալիլլէրի մուհաթաղա իթ-
մէք իշիւն՝ սէրպէտիյէթի թամմէ
վէրմէկէ մէճպուր օլաճաղար» տէ.
միշ:

— Պապը Ալի Սօֆիատաքի գօ-
միսէրի վասիթաւը իւն Պուլկար
հիւքիւմէթիւնն եէնի միւրաճաթ-
տա պուլլընուպ, իքի հիւքիւմէթ
պէյինտէ մուհարէպէ թէտալիլլէ-
րինն թաթիլիւնն արպու կէօս-
թէրմիշ: Տնկվնիկին վէրտիկի
մալիւմաթ իւզրէ, Պուլկապէս հիւ-
քիւմէթի գօմիսէրէ պէրաճ ճէ.
վապար վէրմիշ տիր: Եանի թիւր-
քիա գըրկընլարա նիհայէթ վէրմէ-
լի, ապէրլէրինն սինօրտան կէրի
չէքմէլի, գաշմըշ օլան էհալիւնն
խանէլէրինն ալմէթ իթմէլէրի ի-
շիւն անլէրին հայաթընը թէմիւն
իթմէլէր, բօլթիլլէր միւթթէհիւ
լէրինն աֆի իլան էլլէմէլի, վէ
Մաքէթօնիա էէ Էտիրնէ վիւլայէթ-
լէրինն իտարէսի իգթիգա օլտըղը
կիպի իսլահաթ իճրա իթտիրմէլի
տիր քի նհալի էմին վէ միւթթէրի

օլուսն. աքսի հալտէ, էկէր իշլէր
պու եօլտա տէվաժ իտէճէլէր օլուր
իսէ, Պուլկար հիւքիւմէթի տախիւ
էհալիւնն սէսինն ըհայէթիւնն օրնօ-
րա տօղրու հարէքէթ իթմէկէ մէճ-
պուր օլաճազ տէյու ճէվապ վէր-
միշ:

Բ Ո Ւ Ս Ի Ա

Գանձակտա քիլիսէ էմլաք վէ
վարիտաթընըն հիւքիւմէթտէն
գապթ ու իշլուլ օլընմաւընա գաթ-
շը էրմէնի էհալիսի մուրախաճս.
նէ էօնիւնտէ նիւմայիշաթտա պու-
լընտըղընտան տօլայը, միւթէսա.
րըֆ վէքիլի ապէր վէ բօլիս վա-
սիթաւը իւն գալապալթը տա-
ղըթմազ իսթէմէսինտէ, էհալի
թաշլարլէ գաղալլամըշ, վէ նի-
հայէթ ապէրլէ ամէշ իթմէք էմր
օլընմըշ իսէտէ, ապէրլէլէ Էրմէնի
օլտըղալընտան էմրէ իթաաթ
իթմէմիշլէր, Շու հալտէ միւթէ-
սարըֆ վէքիլի քէնտիսի ընկալէ-
րինն չէքուպ, էհալիտէն պիւր իքի
քիշիլի վուրուր. բօլիսլէր տախիւ
քէսպի ճէսարէթ իտէրէք գըրմէ.
լարլէ սիւհաճըղ էհալի իւզէրինն
հիւճուս իտուպ 40. 5(քիշիլի հարէ
լէրլէր վէ 10. 42 քիշիլիգաթիլ իտէրլէր:
— Բէթլուպուրկտա նէշր օլընան
րէսմի հիւքիւմէթ կաղէթաւընըն
եաղտըղը իւզրէ, Հօմէլտէ Եահու-
տիլլէր վէ խրիսթիանլար պէյինտէ
գալկալար գուհուրա կէլմիշ, 4
եահուտի էօլմիւշ վէ 7 խրիսթիան
վէ 8 եահուտի եարէլէնմիշլէր. 200
խանէ տախիւ սօյուլմուշ: Մէշ
քիւր կաղէթա պու գաղալլալընը
սէգէպի Եահուտիլլէրին իթաաթ.
սըղըղընա համչ իտէյօր:

Ա Ի Ս Տ Բ Ի Ա

Ալմանիա իմէրաթօրը վիլհէլմ
գօնթ Պիւլուպ իւն պէրապէր վի-
էննայա վասըլ օլուպ, իմէրաթօր
Ֆրանց Եօզէֆի զիյարէթ էլլէմիշ
տիր: Իքի միւթթէֆիգ իմէրա-
թօրլարըն միւլաղաթը բէք սալի-
մի օլմուշ տըր:

Գօնթ Պիւլուպ Աւստրիա խա-
րիճիէ նաղըրը գօնթ կօլուսոֆօքի
իւն թէմաժ պիւր պուլլուգ սաաթ
կէօրիւշմիւշ տիր:

Մ Ի Ի Թ Ե Ն Ե Վ Ի Թ Ե

Իքի հաթիթտան պէրու Մար-
սիլիտա եուսուրճազ իլլիթի պաշ
կէօսթէրմիշ օլուպ, պաղը վէֆիաթ
օլտըղը կիպի, 15 խաթթա Սալ-
վաթօր խաթթահանէսինտէ թէտա-
վի օլընմազտա վէ 24 քիշիլի թահ-
թը քէշվիթա ալընմըշ տըր: Էճ-
նէպի գօնսօլտար իմանտան հու-
րէքէթ իտէն վաթօրլաւա քէմիզ
պիլլէթի վէրմէտիլլէրինն հիւքիւ-
մէթէ իսթար իթտիլլէր, Պուսուսն
իւզէրինն՝ թիճարէթ օտալարը
20,000 լիւրա սարճը իւն Մարսի-
լիա չէհիւնի վէ իմանընը թէմիզ
լէմէյէ գալար վէրմիշլէր տիր:

Պէլէտիլլէր ընկալ տախիւ խանէ-
լէրտէ էօլտիւրիւլէն Փարէլէր (մուկ)
իշիւն պալաշիշ վատ իթմիշ տիր.
պու սէպէպլէ Մարսիլիտա Փա-
րէլէրէ գաղալլ չէտիտ պիւր գըրկըն
պաշլամըշ: Շու հալտէ պալաշիլին
էն պէօյիւլի քէտիլլէրէ իսապէթ
իտէճէլէր տիր:

Տ Օ Ք Թ Ի Ն Կ Թ Պ Գ Ի Ո Ր Ե Ա Ն

Նախկին երկաւաճայ փորձառու
թիւշկ Ս Փրկիշ (ի Կ. Պուլիս) Վիէն-
նայի եւ Պուլկար կառաւարու թեան
հինանդանոցներու:

Մասնագէտ ներքին հիւանդութեանց
կնախաւարոյ եւ մանկաբարձ:

Սօֆիայի յարգոյ հայ հասարակու-
թեան կաղաւարաւոր թէ՛ վիւրոյնեալ
թիւշկը այս անգամ իր բնակարանը
փոխադրած է Թըրկօլլաքա փողոց եւ
բասաթ Ս. Նիքօլայի ճիւղ անկիւնի
տունը, օթէլ Բօտօբէն զիմացը, Սօ-
ֆիայի բաղնիքներու զիմացի կարգը,
օթէլ Մաքէտօնիայի քովի զեղարանէն
ոչ հեռու: Հիւանդ կընդունի ամեն
օր ժամը 9.—12 եւ՝ 2.—6:

Ս Ր Ա Հ «Ս Ա Ե Տ Ի Ն Ե Ն Ի Է»

Վաղը երկույն ՆԱՏԵԹՏԱ Հայ. Դեր
խմբին կողմանէ պիւր ներկայացուի
մասնակցութեամբ Արաքո Վուլիւնայի
եւ Ջօի Մալրօւնքիի առաջնակարգ
բանթօմիւ արթիսթներու. ներկայաց-
ուելիք խաղերն են, ԳէնՕՎԱԲԷ վեց
արար եղբերեղ. երգ եւ պար օրիորդ
Քաթիլնայի, Օլկայի եւ Հճ. Յակոբի
կողմէն, մարմնամարզ Պ. Եանի Տրա-
կանօֆի կողմէն:

Իսկ ՆԱՏԵԹՏԱ խումբը պիւր ներ-
կայացնէ՝

Տ Ա Ր Ա Թ Ա Մ Մ Ա Հ Հ

անուս կատակախառն թատեր. 3 արար

Ծ Ա Խ Ո Ւ Գ Ի Ր Ք Ե Ր

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՋ ՀԱԹ-
ԿԱԿԱՆ. Այս երգարանը Բ. անգամ
տպագրուելով աւելի ճոխացած ու բա-
րեփոխուած է, եւ հակառակ դնոյն
աժանութեանը կը պարուսակէ սօզ-
գային հին եւ նոր խիստ շաւ. Կր
գեր:

Գին 1 Ֆր.
ՆէՏԱ կամ ՄԱՄԻՍ ՊԱՏՄԱՆԸ,
Պուլկարիոյ ազատութենէն իտաշ
Պուլկար գիւղացիին Թուրքիէ կը-
րած տառապանքները ու անոնց նիստ
ու կացը կը պատկերացնէ: Եւս հե-
տաքըքալան:

Գին 50 ՄԱՆԻ.
ՀԱԹԵՆՆԻԲԻ ՋՈՂԵՐ. Պատկեր մը
Տաճկահայաստանի իրական կեանքէն,
գրեց Ղ. Նահապետեան:

Ջեղչեալ Գին 1 Ֆր.
ԹԻԱՊԱՐՏ Ա. հատոր (162 էրես) 1 Ֆր.
ԹԻԱՊԱՐՏ Բ. հատոր (432 էրես) 2 Ֆր.
Այս գիրքերը տառաւորաւ համար
պէտք է գիւմէլ Իրաւունքի խմբալու-
թեան, բօլթի ճախը 10 ալկան
սանթիւմ միտտեղ զրկելով. իսկ գիր-
քերու արժէքին համար, կթէ ուրիշ
գիւրութիւններ պակսիւն, կ'նշող նաւի
նամակագրօյ՝ 10 Օ/Ո զեղչով:

Печатница Взаимность Варн.

Одговорник Н. Драгулов